



ԼՈՒՐԵՐ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Շաբաթ 14 եւ Կիր. 15 Յուլիս 1990 շաբաթավերջը հոգեկան վերանորոգման առիթ էր Սիտնիի հայութեան համար:

Աւստրալիոյ եւ Նոր Զելանդայի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան եպս. Պալիօգեան, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրեց Յակոբ Սրկ. Գարագաշեանը:

Յակոբ Սրկ.ի կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Շբ. 14 Յուլիսին, երեկոյեան կիրակմութի ժամերգութենէն ետք: Խարտաւիլակի պաշտօնը կատարեց Նորայր Քհն. Բաթանեան, աղընթերակայութեամբ Գեորգ Սրկ. Ճանոյեանի եւ Յարութիւն Սրկ. Հանրմեանի:

Ընծայացուն եկեղեցւոյ դռնէն դէպի դաս առաջնորդուեցաւ շարականներու եւ աղօթքներու ընդմէջէն, որու աւարտին տեղի ունեցաւ ողորպիստ դաւանութեան եւ կամաւոր ծառայութեան հարցադրումը, համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններուն ու դաւանութեան:

Կոչման արարողութեան աւարտին, Առաջնորդ Ս. Հայրը ներկայ հաւատացելոց բացատրական մը տուաւ քահանայական կոչման, ձեռնադրութեան եւ օծման մասին:

Կիր. 15 Յուլիսին, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Ս. Հայրը Առաջնորդ Աղան Ս. Հայրը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբը՝ ղեկավարութեամբ Դպրապետ Վարդան Էմսանի:



Ձեռնադրության արարողությունից մի պահ

«Ձի ողորմած...» աղօթքէն ետք, սկիզբ առաւ ձեռնադրութեան արարողութիւնը. ընծայացուն ծնրադիր խորան բարձրանալով, Ձեռնադրիչ Ս. Հօր օրհնութիւնը ստացաւ, եւ ապա ժողովուրդին դառնալով «Աստուածային» երգեցողութեան ընթացքին աշխարհային կեանքէ հրաժարեցաւ: Ապա աղօթքի ընթերցման պահուն սարկաւագական ուրարը փորուրարի վերածուեցաւ ի նշան Քրիստոսի քաղցր լուծին:

Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Ողջոյն» ուր կրկին աղօթքներու ընթացքին յաջորդաբար Փիլոն, սաղաւարտ, շուրջառ, գօտի ու քահանայական լրիւ զգեստը շնորհուեցաւ ընծայացուին:

«Առաքելոյ Աղանոյ» շարականի երգեցողութեան աւարտին, Ձեռնադրիչ Ս. Հայրը Սրբալոյս Միտոնով օծեց ընծայեալի ճակատը եւ երկու ձեռ-

քերու ամերը, Յակոբ Սրկ.ը վերանուանելով Պարթեյ քահանայ, Պարթեյ հայրապետներու յիշատակին:

Օծումէն ետք Ս. Հայրը նորընծային յանձնեց Ս. Սկիհը, անոր տալով պատարագելու իշխանութիւն, ապա նորած Պարթեյ քահանայ հայրը իր առաջին «Խաղաղութիւն»ը բաշխեց հաւատացեալ ժողովուրդին:

Այս հոգեպարար արարողութեան ամարտին, Առաջնորդ Ս. Հայրը խօսեցաւ հոգեշունչ քարոզ մը, նորած Պարթեյ քահանային վերջիշեցնելով հաւատքի ու նուիրումի ոգին, թելադրելով որ իր ծառայութիւնը մատուցանէ հայ հաւատացեալ ժողովուրդին, ընթանալով Քրիստոսի ճանապարհէն ու Պարթեյ հայրապետներու ուղիէն:

«Ողջոյն»ի պահուն եկեղեցական դասը Չեռնադրիչ Ս. Հօր առաջնորդութեամբ ողջոյնը ստացաւ Նորընծայ Պարթեյ քահանայի ճակատէն ու ձեռքերէն: Նոյնը տեղի ունեցաւ պատարագի ամարտին՝ աջհամբոյրով, խորներամ ժողովուրդի կողմէ:

Յամարտ Ս. Պատարագի նորընծայ Պարթեյ քահանայն առաջնորդարանէն ներս ընդունեց եկեղեցոյ պաշտօնական մարմիններու եւ պաշտօնական անձնատրութիւններու շնորհատրանքները: Եկեղեցոյ Ատենապետ, Տիար Կարօ Սէթեան յանուն վարչութեան շնորհատրական խօսքով հանդէս եկաւ:

Չեռնադրութեան հոգեպարար արարողութեան ներկայ եղան Արամայիս Ա. Քհն. Միրզայեանը, Հայ Աւետարանական եկեղեցոյ Հովիւ Վեր. Յովհաննէս Գարճեանը, Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդի ներկայացուցիչներ եւ այլ անձինք:

Պարթեյ քահանայի կնքահայրութեան պաշտօնը սիրալոյսով կերպով յանձն առաւ Սիտնիի եկեղեցոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբի Վարչութեան Ատենապետ, Յարութիւն Քէօթօղլանեանը, եկեղեցաւէր եւ հայրենասէր հայորդի մը:

Պարթեյ Քահանայ Գարագաշեան, ծնած է Պոլիս 1942-ին: Նախակրթարանի ուսումը ստացած է Պոլսոյ Եսայեան վարժարանի մէջ, որմէ ետք նետուած է կեանքի ասպարէզ. այդ տարիներու ընթացքին միշտ դիմած է ինքնագարգացման, կապ պահելով հայ գրի ու լեզուի հետ:

Փոքր տարիքէն ծառայած է Պէյօղլուի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, որ եւ ստացած է դպրութեան եւ սարկաւագութեան աստիճանները:

1985-ին գաղթած է Աւստրալիա եւ բնակութիւն հաստատած Սիտնիի մէջ. ժամանման առաջին օրէն սիրով ու նուիրումով ծառայած է Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ:

Պարթեյ քահանայ ամուսնացած է 1969-ին ու հայր է երկու աղջիկ զաւակներու:

Պարթեյ քահանային կը մաղթենք որ ըլլայ «Մշակ առանց ամօթոյ»:

Սիտնի, Աւստրալիա,
16 Յուլիս 1990

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի

ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՏԱՐԱԳ

Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ երկարամեայ հովիւ Արամայիս Ա. Քհն. Միրզայեան, յառաջացեալ տարիքի ու վատառողջութեան պատճա-